Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

| RESTART ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԱՐԿԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ | | |
|---|---|---|
| Վարկառու | ՀՀ ռեզիդենտ Անհատ ձեռնարկատեր, Իրավաբանական անձ | |
| Վարկի նպատակ | ՀՀ այլ բանկերում (այդ թվում՝ ֆինանսական հաստատություններում) գործող բիզնես նպատակով տրամադրված վարկերի, վարկային գծերի, օվերդրաֆտների վերաֆինանսավորում, ձեռնարկատիրական գործունեության զարգացում | |
| Վարկի տեսակ | Վարկ, վարկային գիծ | |
| Վարկի արժույթ | ՀՀ Դրամ | ԱՄՆ դոլար |
| Վարկի գումար | 15,000,000-400,000,000 ՀՀ դրամ | 40,000-1,000,000 ԱՄՆ դոլար |
| Լրացուցիչ վարկի գումար * | Վերաֆինանսավորվող վարկի մնացորդի մինչև 40%-ի չափով | |
| Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք ** | Առաջին 3 տարիների համար՝<br>այլ ֆինանսական հաստատությունից տեղափոխվող վարկերի, վարկային գծերի միջին կշռված անվանական տոկոսադրույք -2%՝ նվազագույնը 11.50%, որից հետո 13.50%՝ մնացորդային ողջ ժամկետի համար: | Առաջին 3 տարիների համար՝<br>այլ ֆինանսական հաստատությունից տեղափոխվող վարկերի, վարկային գծերի միջին կշռված անվանական տոկոսադրույք -2%՝ նվազագույնը 8%, որից հետո 9.50%՝ մնացորդային ողջ ժամկետի համար: |

**Հաստատված է**
**Տնօրինության 19.02.2026-ի նիստի**
**Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:**
**Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:**

| | | |
|---|---|---|
| **Վարկային գծի օգտագործված մասի նկատմամբ կիրառվող տարեկան անվանական տոկոսադրույք** | **Առաջին 3 տարիների համար՝ այլ ֆինանսական հաստատությունից տեղափոխվող վարկերի, վարկային գծերի միջին կշռված անվանական տոկոսադրույք -2%՝ նվազագույնը 12.00%, որից հետո 14.00%՝ մնացորդային ողջ ժամկետի համար:** | **Առաջին 3 տարիների համար՝ այլ ֆինանսական հաստատությունից տեղափոխվող վարկերի, վարկային գծերի միջին կշռված անվանական տոկոսադրույք -2%՝ նվազագույնը 8.50%, որից հետո 10%՝ մնացորդային ողջ ժամկետի համար:** |
| **Չօգտագործված մասի տոկոսադրույք (Վարկային գծի դեպքում)** | 0.5% | |
| **Տարեկան փաստացի տոկոսադրույք** | **Վարկ՝ 11.91-24%<br>Վարկային գիծ՝ 11.91-24%** | **Վարկ՝ 8.15-24%,<br>Վարկային գիծ՝ 8.15-24%** |
| **Վարկի ժամկետ** | 37-120 ամիս | 37-120 ամիս |
| **Մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատված** | 0-24 ամիս՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից | |
| **Վերաֆինանսավորվող վարկի/երի նկատմամբ պահանջներ** | **Անկախ գումարի չափից վարկը տրամադրվում է առանց Վարկառուի ֆինանսատնտեսական վերլուծության, ինչպես նաև Վարկառուի գործունեության վայր այցելության, եթե.**<br>**• վերաֆինանսավորվող վարկ(եր)ը այլ ՀՀ բանկերում կամ ֆինանսական հաստատություններում սպասարկվում է նվազագույնը 12 ամիս (1-ից ավել վարկերի դեպքում՝ միջին կշռված ժամկետով 12 ամիս),**<br>**• վերջին 12 ամիսների ընթացքում իրականացվել են առնվազն գրաֆիկով սահմանված մարումներ:**<br><br>**Վերոնշյալ պայմաններից շեղումների առկայության դեպքում վարկը ենթակա է տրամադրման ֆինանսական ցուցանիշների վերլուծության հիման վրա:** | |

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

| | |
|---|---|
| Վարկառուի (նաև իրավաբանական անձի մասնակիցներ/բաժնետերեր, իրական շահառու) նկատմամբ պահանջներ | Վարկառուի տարիք՝ 18-65 տարեկան,<br><br>Վարկային պատմություն.<br><br>✓ Վերջին 12 ամիսների ընթացքում դասակարգման բացակայություն և/կամ ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը: Հանրագումարային 15 օր և ավել ժամկետանցի պարագայում Բանկի կողմից կարող է պահանջվել վերլուծություն:<br>✓ Գործող ժամկետանց պարտավորությունների բացակայություն: |
| Մարման եղանակ | Վարկի դեպքում.<br>✓ Անուիտետային (մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում),<br>✓ Դիֆերենցված (մայր գումարի ամենամսյա հավասարաչափ և տոկոսագումարի ամենամսյա վճարում),<br>✓ Անհատական վճարումների ժամանակացույց՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից:<br>Վարկային գծի դեպքում.<br>✓ Տոկոսագումարի ամսական վճարում,<br>✓ Մայր գումարը ժամկետի վերջում կամ անհատական վճարումների ժամանակացույց՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից:<br><br>Մարման եղանակը՝ ըստ հաճախորդի ընտրության:<br>Ընդ որում, նոր տրամադրվող վարկի (այդ թվում՝ լրացուցիչ վարկի գումարը) սպասարկման գծով ամսական մարման գումարը չպետք է գերազանցի վերաֆինանսավորվող վարկի գծով վերջին 12 ամիսներին իրականացված միջին ամսական մարումների գումարի մեծության 115%-ը (կիրառելի է, երբ վերաֆինանսավորման պարագայում չի իրականացվում ֆինանսատնտեսական վերլուծություն): |
| ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ | |
| Վարկի տրամադրման և սպասարկման վճար | Չի սահմանվում |

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

| | |
|---|---|
| Ժամկետանց մայր գումարի տույժ | 0.1% օրական |
| Ժամկետանց տոկոսի տույժ | 0.13% օրական |
| Վարկի վաղաժամկետ մարման տույժ | Վաղաժամկետ մարվող գումարի 5.5%-ի չափով: |
| Վարկային գծի պայմանագրի սահմանաչափի վաղաժամկետ նվազեցման կամ պայմանագրի դադարեցման տույժ | Սահմանաչափի նվազեցման դեպքում՝ նվազեցվող գումարի մեծության 5.5%-ի չափով:<br>Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ գործող սահմանաչափի 5.5%-ի չափով: |
| ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ | |

**Հաստատված է**
**Տնօրինության 19.02.2026-ի նիստի**
**Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:**
**Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:**

| | |
|---|---|
| **Ապահովման միջոց** | **1) Անշարժ գույք,**<br>**2) Շարժական գույք (սարքեր, մեքենասարքավորումներ և տրանսպորտային միջոցներ),**<br>**✓ եթե անշարժ գույքը չի ապահովում անհրաժեշտ վարկ/գրավ հարաբերակցությունը, լրացուցիչ գրավի առարկա կարող է հանդիսանալ շարժական գույքը:**<br>**✓ անշարժ և շարժական գույքերի գրավի դեպքում, ընդհանուր վարկ/գրավ հարաբերակցության հաշվարկում շարժական գույքի մասնաբաժինը չի կարող գերազանցել 20%-ը:**<br>**3) Երաշխավորություն/ներ.**<br>**✓ Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում բիզնեսի հիմնադիրների և իրական շահառուների անձնական երաշխավորություններ,**<br>**✓ Անհատ ձեռնարկատերերի դեպքում իրական շահառուն երրորդ անձ հանդիսանալու դեպքում՝ իրական շահառուի երաշխավորություն:**<br>**4) Տրանսպորտային միջոցի գրավի դեպքում արտադրության ժամկետը չի կարող գերազանցել՝**<br>**✓ ռուսական արտադրության ավտոմեքենաների համար՝ 5 տարի,**<br>**✓ այլ երկրների արտարդրության ավտոմեքենաների համար՝ 10 տարի:**<br>**5) Վարկային կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ:** |
| **Վարկ/ Գրավ առավելագույն արժեք** | Համաձայն հավելված 1-ի:<br><br>Լրացուցիչ վարկի գումարի համար սահմանված վարկ/գրավ հարաբերակցությունը չբավարարելու պարագայում, լրացուցիչ վարկի գումարը կազմում է առավելագույնը 10,000,000 ՀՀ դրամ կամ 25,000 ԱՄՆ դոլար: |

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

| | |
|---|---|
| Ապահովագրություն | 1) Գրավադրվող անշարժ կամ շարժական գույքը ենթակա չէ ապահովագրման, բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների (մարդատար, բեռնատար):<br>2) Ավտոտրանսպորտային միջոցները ենթակա են պարտադիր «Կասկո» (ֆիզիկական վնաս և առևանգում) ապահովագրության՝ հօգուտ Բանկի, առնվազն վարկի գումարի չափով և վարկի գործողության ամբողջ ընթացքում յուրաքանչյուր տարի ապահովագրական պայմանագրի վերակնքման պայմանով:<br>3) Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցը շահագործվելու է ՀՀ սահմաններից դուրս, անհրաժեշտ է ԱՊՀ երկրների ԿԱՍԿՈ ապահովագրություն:<br><br>Ապահովագրությունն իրականացվում է հաճախորդի կողմից: |
| Գրավի գնահատում | • Գրավը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության և/կամ Բանկի աշխատակցի կողմից՝ կախված վարկի գումարի չափից:<br>• Բանկի աշխատակցի կողմից գնահատումն իրականացվում է անվճար: |
| Երաշխավորների նկատմամբ պահանջներ (առկայության դեպքում) | Ֆիզիկական անձ (18-65 տարեկան), ով.<br>✓ չունի գործող ժամկետանց պարտավորություններ.<br>✓ վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:<br>✓ Երաշխավորներից առնվազն մեկը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ գրանցված աշխատակից: |
| ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ | |
| Վարկի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման ժամկետ | Վարկային հայտի վերաբերյալ որոշումը կայացվում է պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 3 աշխատանքային օրվա ընթացքում: |

**Հաստատված է**
**Տնօրինության 19.02.2026-ի նիստի**
**Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:**
**Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:**

| | |
|---|---|
| **Որոշման մասին տեղեկացման ժամկետ** | **Որոշման կայացումից հետո մինչև 1 աշխատանքային օր:** |
| **Վարկի տրամադրման ժամկետ** | **Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց և գրավի իրավունքի պետական գրանցումը իրականացնելուց հետո՝ մինչև 1 աշխատանքային օր:** |
| **Որոշման վավերականության** | **30 աշխատանքային օր**<br>**Ընդ որում, Բանկը իրավասու է մերժել վարկի տրամադրումը, եթե փոփոխվել են վարկի տրամադրման դրական որոշում կայացնելու համար էական համարվող պայմաններից որևէ մեկը:** |

** Լրացուցիչ վարկի գումարը կարող է տրամադրվել ինչպես վերաֆինանսավորման վարկի հետ միասին՝ 1 վարկի միջոցով, այնպես էլ որպես առանձին վարկ՝ սույն ամփոփագրի համաձայն սահմանված պայմաններով: Ընդ որում, վերաֆինանսավորման նպատակով տրամադրվող վարկի և լրացուցիչ վարկի հանրագումարը չի կարող գերազանցել սույն ամփոփագրի համաձայն սահմանված վարկի առավելագույն գումարի սահմանաչափը: Առնվազն 50% ը պետք է օգտագործվի անկանխիկ եղանակով:*
*** Արտարժույթային, այդ թվում՝ միաժամանակ տարբեր արժույթներով (ներառյալ՝ ՀՀ դրամով) վարկերի և վարկային գծերի՝ դրամային վարկով վերաֆինանսավորելու դեպքում՝ 13.5%:*
*Դրամային , այդ թվում՝ միաժամանակ տարբեր արժույթներով (ներառյալ՝ արտարժույթային) վարկերի և վարկային գծերի՝ դոլարային վարկով վերաֆինանսավորելու դեպքում՝ 9.5%:*
*Այլ ֆինանսական հաստատությունից տեղափոխվող վարկերի, վարկային գծերի միջին կշռված անվանական տոկոսադրույք -2% տարբերությունը 21.70%-ը գերազանցելու պարագայում առաջին 3 տարիների համար տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանվում է 21.70%:*
*Միջին կշռված տոկոսադրույքի և ժամկետի հաշվարկման համար հիմք են հանդիսանում տեղափոխվող վարկերի մնացորդները և փաստացի սպասարկված ժամկետները:*
*Այն դեպքում, երբ ԱՔՌԱ վարկային բյուրոյում տեղափոխվող վարկի տոկոսադրույքը սահմանված է 0% և դրա համար առկա չէ հիմնավորում, տվյալ տեղափոխվող վարկի տոկոսադրույքը սահմանվում է 21.70%:*
*Վերաֆինանսավորման ենթակա են նաև հաճախորդի հետ փոխկապակցված ընկերությունների վարկերը, ինչպես նաև այն սպառողական վարկերը, որոնք տրամադրվել են բիզնես նպատակով և մնացորդը մեծ կամ հավասար է 5 մլն դրամից: Վերաֆինանսավորվող վարկը/վարկերը մինչև << Ֆասթ Բանկ >> տեղափոխվելը կարող են սպասարկված լինել մեկից ավելի ֆինանսական հաստատություններում*

**Հաստատված է**
**Տնօրինության 19.02.2026-ի նիստի**
**Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:**
**Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:**

**Ծանոթություն**

**1.** Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայություններ և վճարները.

1.1. Անշարժ գույքի՝ այդ թվում հողամասի, գրավադրման դեպքում.

1) Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10 000 ՀՀ դրամ,
2) Գրավի պետական գրանցման վճար՝ 26 000 ՀՀ դրամ,
3) Նոտարական վավերացման վճար՝ 16 000-20 000 ՀՀ դրամ:
4) Գույքի գնահատման վճար՝ 15 000-25 000 ՀՀ դրամ:

1.2. Ավտոմեքենայի գրավադրման դեպքում.

1) Ավտոտրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք՝ 3 000-4 000 ՀՀ դրամ,
2) Գրավի պետական գրանցման վճար՝ 2 000-3 000 ՀՀ դրամ,
3) Գրավի ապահովագրություն՝ վարկի գումարի 2.5%-ի չափով,
4) Նոտարական վավերացման վճար՝ 11 000-12 000 ՀՀ դրամ
5) Գույքի գնահատման վճար՝ սկսած 5 000-20 000 ՀՀ դրամ:

**2.** Նախքան պայմանագրի կնքումը Բանկը վարկառուին և երաշխավորին կտրամադրի վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են վարկառուին տրամադրվելիք վարկի էական պայմանները:

**3.** Անկախ սույն դրույթներում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:

**4.** Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

**5.** Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով՝ փոխանցելով Բանկում բացված հաճախորդի բանկային հաշվին:

**6.** Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների և անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին՝ «Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ» և «Անկախ գնահատողներ ցանկ Հավելվածներով:

**7.** Վարկը տրամադրվում է Բանկի «Հին Նորք», «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան» , «Թումանյան», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Տիգրան Մեծ», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Անի», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան», «Չարենցավան» , «Ալավերդի», «Քաջարան», «Նոր Նորք» մասնաճյուղերում:

**Հաստատված է**
**Տնօրինության 19.02.2026-ի նիստի**
**Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:**
**Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:**

**8.** Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններ

8.1. Վարկառուի և Գրավի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

**9.** Վարկի մերժման գործոններ

9.2. Վարկառուի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

9.2. Վերջին 12 ամիսների ընթացքում ստացված վարկերի քանակը 5-ից ավել լինելու պարագայում վարկային հայտը կարող է մերժվել:

**10.** Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների համար այլ հերթականություն սահմանել:

**11.** Արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսագումարների (առկայության դեպքում նաև սպասարկման վճարը, տույժերը, տուգանքները) գանձման, ինչպես նաև տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:

**12.** Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքէջում՝ https://www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի մասնաճյուղերում:

**13.** Երաշխավորն իրավունք ունի.

13.1. Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել վարկի մնացորդի վերաբերյալ տեղեկատվություն:

13.2. Վարկառուից հետ ստանալու իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

13.3. Ստանալ քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները՝ համաձայն բանկում գործող Ոչ ֆինանսական ծառայությունների սակագների:

**14. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ՝ ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԸ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ), ԻՍԿ ՏՈՒՅԺԵՐԸ/ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ/ԿԱՄ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՑՎԱԾ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐՔԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ, ԳՐԱՎԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԻՄԱՑ 3-ՐԴ ԱՆՁԱՆՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ:**

**15. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՓՈԽԱՐԿՄԱՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ, ՈՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎՐԱ:**

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

16.ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:

17. ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋՈՒՄ (www.fastbank.am):

20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՈՐՈՆՑ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋՈՒՄ `https://www.fastbank.am: ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԵՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ, ՈՐԸ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՄԵԿ ԱՄԻՍԸ, ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ:

21. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ:

22. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՍՊԱՌՈՂԻՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ www.fininfo.am:

23. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

24. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔԱՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ